

1655-էն վերջ կը դադրին յիշատակութիւններ Սօջայ Սարֆրազի մասին: Իմ համոզումս է, որ ան 1656-ին է մեռած:

Հոս, Տէր Յովհաննանցէ առնելով, կուտամ Սօջայ Սարֆրազի տապանադիրը:—

Թաղեցաւ ի հանդեսարանի աղբատոհմին իւրեանց:

Այս է արձանագիր տապանին:

«Ա՛ իմ աննման Սօջայ, որ էիր Հայոց թագաւոր,

Անուեղ Սարֆրազ կոչի՛ սրբնթաց զօրեղ դատաւոր,

Խելօք, քո ճարտար լեզուէդ զարմանար ամէն թագաւոր

Շատ իշխանք քո տեսուդ փափաք, ահեզատես իշխան փառաւոր:

Քո ամք է ԾԵ (55), որ չկէր յաշխարհս քեզ նմանաւոր,

Ճշմարիտ էր քո խօսքդ, որ առնիր դրան հոգեւոր,

Խոնարհէիր օրինաց, հանապաղ դու աղօթաւոր,

Թողիր անցաւոր աշխարհս, հրաւիրեցար առ Տէր երկնաւոր,

Թուին Ռ (եղծեալ) Ին»:

Տապանաքարին այս թուականին մասին, ինչպէս ըսինք, կասկած ունիմ: Տէր Յովհաննանց կը դրէ.

«Թուականն է Ռ եւ Ին, այլ կայ եղծեալ տառ մի ընդ մէջ Ռ եւ Ին, որ ինձ թուի չարամտութեան լինել զօրձ, իսկ չիք տարակոյս թէ եղծեալ տառն է Ճ, որ եղիցի թուական մահուան նորա՝ ՌձԻն»: (54)

Չեմ գիտեր թէ ի՞նչ տեսակ «չարամտութեան» կը վերագրէ Տէր Յովհաննանց թուականին այս եղծումը: Նոյն տեսն իր ըսելը թէ՛ եղծեալ գիրը ձ պէտք է ըլլայ, ես ալ կ'ընդունիմ: Սակայն, կը խորհիմ, որ ան մատնուած է շփոթութեան մը եւ թուականը պէտք է վերակազմել ՌձԵ կամ ՌՁ եւ Ե եւ ոչ թէ ՌձԻն: Իմ առաջարկած ընթերցումս ՌձԵ հաւասար է 1656-ին, որուն մահուան թուական ըլլալը կ'ընդունիմ, քանի որ ասկէ վերջ Սարֆրազ Պէկի մասին յիշատակութեան չենք

հանդիպիր, եւ, ինչ որ աւելի կարեւոր է, վերջնական վաւերաթուղթ մըն ալ ունինք, ըստ որուն Սօջայ Սարֆրազ արդէն մեռած էր 1660-ին: Ահա իմ այդ փաստս:—

Ըստ Հ. Գարեգին Վ. Զարբհանեկեանի Հայկական Մատենագրութեան, Յիսուս Որդի Երկրորդ տպագրութիւնը եղած է 1660-ին եւ ունի սա յիշատակարանը. «... Ետ կարողութիւն նուստ եւ տառապեալ անձին իմոյ ձուան Պաղիսղա՝ որ մականուամբ ասի Պօլիս որ եմ աղղաւ լատինացի ի գեղեցկաչէն մայրաքաղաքէն Վանատիկոյ: Զոր բազում ջանիւք եւ աշխատանօք հաղիւ կարացի ի յանդ հանել զտպագրութեան արուեստ: Եւ ոչ ուստեք եղեւ ինձ օգնութիւն այսմ տպագրութեան արհեստիս: Ապաւինելով ի յոյս ամենեցուն Քրիստոսի, ... եղի ի մտի զտպագրութեան արուեստն առ ի պայծառութիւն աղղին Հայոց: Այլ եւ պատճառ աշխատանաց մերոց այս էր որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր եւ բարեկամութիւն հետ աղղին Հայոց. եւ յարժամ կայի տեսանել զչքեղաչուք իշխանն Հայոց Սօճայ Սարֆրազն. զոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ, զոր փոխեալ է առ Աստուած. եւ զնորահաս որդին իւր զՍօջայ Վաղանն»: (55)

Քիչ վարը հոն մեղի կը տրուի նաեւ տպագրութեան թուականը՝ «Ի թուականութեանս Հայոց ՌձԹ (1660)»:

Տէր Յովհաննանցի ծանօթ է եղած յի-

(55) Վեներիկ, 1883: էջ 437-438: Արդէն աշխատութիւնս դրած աւարտած էի, երբ Վեներիկ հրատարակուած «Պատ. Հայկական Տպագրութեան» հատորին մէջ, 1895, գտայ խնդրոյ առարկայ յիշատակարանը, ըստ երեւոյթին խնամոտ արտագրութեամբ, ուր կը կարդամ. «... եւ յարժամ ցանկայի տեսանել զչքեղաչուք իշխանն Հայոց Սօջայ Սարֆրազն. Զոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ. զոր փոխեալ է առ Աստուած. եւ զնորահաս որդին իւր զՍօջայ Վաղանն»... Եւն. (էջ 93-94): Ասիկա կը հաստատէ, թէ իմ արդէն ըրած սրբագրութիւնն իրաւացի եւ տեղին էր:

(54) «Պատ. Նոր Զուգայու», էջ 91: